Արձանագրություն N 2
ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08 մայիսի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ասրյանը, Ն. Ավետյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերում հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի ապրիլի 12-ին, ժամը 16:00-ին:

Հրավերում կատարված փոփոխություններ

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ	ք. Երևան, Արմենակյան 125 043 040804	jhhi@jhhi.am
«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ	ք. Երևան, Արշակունյաց 50/1 095 585535	deltashinllc@gmail.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 **Գնման գին – 1 761 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Քաղցրաշեն-1 պոմպակայանի N5 պոմպի մղման խողովակաշարի կառուցում				

1	«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ	1 400 000	280 000	1 680 000
<u>Չափաբաժին 2</u> **Գնման գին – 1 258 600 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Արարատ համայնքի Արարատ բնակավայրի վարչական տարածքում ջրագծի հիմնանորոգում				
1	«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ	799 000	0	799 000
2	«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ	1 000 000	200 000	1 200 000
<u>Չափաբաժին 3</u> **Գնման գին – 5 000 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)** Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - Գեղարքունիք համայնքի N 2 ջրամբարի վերականգնում				
1	«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ	4 100 000	820 000	4 920 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

Մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ.

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ հայտով ներկայացվել է հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ հրավերին համապատասխան,

մասնակից «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն ներկայացրել է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի հետ կնքված կոնսորցիումի պայմանագիր՝ 3-րդ չափաբաժնին մասնակցելու համար:

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2.3 կետի համաձայն Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար ներկայացված բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում Գնային առաջարկը ներկայացվել են «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի անունից և հաստատմամբ, ուստի ներկայացված հայտը չի կարող դիտարկվել որպես «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտ:

Ելնելով վերոգրյալից ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի հայտատու է համարվում «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ն և հայտը գնահատվում է որպես «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ–ի հայտով ներկայացված նմանատիպ պայմանագրերը չեն համապատասխանում

Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին՝ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում ջրամբարների պատվարների կառուցման և (կամ) վերակառուցման և (կամ) վերականգնման նախագծային աշխատանքները, ՀՀ կառավարության 31.07.2003թ N 957-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան առնվազն երեք ջրամբարի անվտանգության հայտարարագրի (ԱՀ) կազմման ծառայությունները:

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին (3-րդ չափաբաժնի մասով) մինչև կասեցման ժամկետի ավարտը (07.05.2024թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որի վերաբերյալ Armeps համակարգի միջոցով և էլեկտրոնային փոստով «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին ուղարկվել է ծանուցում:

Սահմանված ժամկետում «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթեր, որոնցով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.10 կետը՝ մասնակից «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի 3-րդ չափաբաժնի հայտը մերժել:
2. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը (3-րդ չափաբաժինը) չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.

- 1-ին չափաբաժին - **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին,**
- 2-րդ չափաբաժին - **«ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին:**

4. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5. Պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելուն հաջորդող (2-րդ չափաբաժնի համար՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող) չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-24/5-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ **«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ին և «ԴԵԼՏԱՇԻՆ» ՍՊԸ-ին**՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բադալյան
անդամներ	_____	Ս. Ասրյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան